ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

N 170

02.11.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Փշատավան համայնքի ավագանու 25.09.2020 թվականի որոշումները:

Առդիր թերթ

Համայնքի ղեկավար Ա.Քյարամյան

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

**<< 25>> սեպտեմբերի 2020 թ.** **Թիվ 24**

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի **14**-րդ հոդվածի **6**-րդ մասով.

Ավագանին որոշում է

**1.**Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու **2020** թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
| --- | --- | --- | --- |
| Վ.Մինասյան | ---------------- | ---------------- | ------------- |
| Ա.Սարգսյան | ---------------- | --------------- | ------------- |
| Ա.Արշակյան | ---------------- | ---------------- | ----------- |
| Ա. Պապիկյան | ------------------ | ------------------- | ------------ |
| Ա.Չաղարյան | ------------------ | ---------------- | ------------- |
| Ա.Ստեփանյան | ------------------ | ----------------- | ------------- |
| Ա.Ղազարյան | ------------------ | ---------------- | ------------- |

Համայնքի ղեկավարի Ա.Քյարամյան

2020 թվականի սեպտեմբերի <<25>> -ին

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի
ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-_ ԹԻՎ 3 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

**<<25>> ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թ.** **N 25**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի **18-րդ** հոդվածի առաջին մասի **7-րդ** կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և սոցիալական հանձնաժողովի եզրակացությունները .

Ավագանին որոշում է

**1.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան գյուղական համայնքի սոցիալապես անապահով բնակչին ցուցաբերել **200000** / երկու հարյուր հազար / ՀՀ դրամ դրամական օգնություն:

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՆԵՐ`

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Վ.Մինասյան | ---------------- | ---------------- | -------------- |
| Ա.Սարգսյան | ---------------- | ---------------- | -------------- |
| Ա.Արշակյան | ---------------- | ---------------- | -------- |
| Ա. Պապիկյան | ---------------- | ---------------- | -------------- |
| Ա.Չաղարյան | ---------------- | ---------------- | -------------- |
| Ա.Ստեփանյան | ---------------- | ---------------- | -------------- |
| Ա.Ղազարյան | ---------------- | ---------------- | -------------- |

Համայնքի ղեկավարի Ա.Քյարամյան

2020 թվականի սեպտեմբերի <<25 >> -ին

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

25-Ի ԹԻՎ 25 ՈՐՈՇՄԱՆ

Ցուցակ դրամական օգնություն ստացողների

| հ/հ | Անուն ազգանուն հայրանուն | Գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | Արևհատ Վարազդատի Թադևոսյան | 50000/ հիսուն հազար / |
| 2 | Մնացական Ռազմիկի Արշակյան | 50000/ հիսուն հազար / |
| 3 | Լարիսա Իշխանի Հակոբյան | 50000/ հիսուն հազար / |
| 4 | Անդրանիկ Արսենի Ղազարյան | 50000/ հիսուն հազար / |
| | Ընդամենը | 200000/ երկուհարյուր հազար / |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փշատավան համայնք, 20 փողոց, 9-րդ շենք, 077-87-00-06
pshatavangpraf@mail.ru

## «25 » «ՍԵՊՏԵՄԲԵՐԻ » 2020 թվականի N 26 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 3 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, ինչպես նաև « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 11.09.2020 թվականի թիվ 27.3/18811-20 պետական փորձագիտական եզրակացությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2020 թվականի հունվարի 21-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին >> N 3-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունները համաձայն հավելվածի .

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից.:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Վ.Մինասյան | ---------------- | ---------------- | ------------- |
| Ա.Սարգսյան | ---------------- | ---------------- | ----------- |
| Ա.Պապիկյան | ---------------- | ---------------- | ----------- |
| Ա.Չաղարյան | ---------------- | ---------------- | ----------- |
| Ա.Արշակյան | ---------------- | ---------------- | ----------- |
| Ա.Ստեփանյան | ---------------- | ---------------- | ------------- |
| Ա.Ղազարյան | ---------------- | ---------------- | ------------- |

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ <<ՍԵՊՏԵՄԲԵՐԻ>> <<25>> -Ի
ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 3 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1) Բյուջեի ծախսերի մասում՝

**1.1)** **01.1-1-ի** բա ժնի 42 34 հոդվածը պակասեցնել 140.0 հազար դրամով

1.2 ) 01.1.1. բաժնի 42 61 հոդվածը պակասեցնել 200,0 հազար դրամով

**1.3. ) 01.1.1 բաժնի 42 14 հոդվածը պակասեցնել 39,0 հազար դրամով**

**1.4. ) 01 6.1 բաժնի 42 51 հոդվածը պակասեցնել 228,0 հազար դրամով**

**1.5. ) 08.2.4 բաժնի 42 39 հոդվածը պակասեցնել 300,0 հազար դրամով**

**1.6. ) 08.2.3 բաժնի 42 51 հոդվածը պակասեցնել 173,0 հազար դրամով**

1.7 ) 1 0.7.1. բաժնի 47 29 հոդվածը պակասեցնել 500,0 հազար դրամով
1.8 ) 1 0.7.1. բաժնի 48 19 հոդվածը պակասեցնել 150,0 հազար դրամով
1.9/ ) 04.5.1. բաժնի 42 69 հոդվածը ավելացնել 560,0 հազար դրամով
1.10 ) 06.3.1. բաժնի 42 69 հոդվածը ավելացնել 500,0 հազար դրամով
1.11 ) 01.1.1. բաժնի 51 22 հոդվածը պակասեցնել 185,0 հազար դրամով
1.12 ) 06.3.1. բաժնի 51 13 հոդվածը ավելացնել 855,0 հազար դրամով
1.13. ) Վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացնել 670,0 հազար դրամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 27.3/18811-20
«11» 09 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՓՇԱՏԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ա.ՔՅԱՐԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Քյարամյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 139 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

9/11/2020

X

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594116

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծն (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես՝ անհրաժեշտ է նշել իրավական ակտի տեսակը:
2. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի ոչ թե 6-րդ, այլ 33-րդ հոդվածին:
3. Նախագծի վերնագրից և 1-ին կետից անհրաժեշտ է հանել «և լրացումներ» բառերը՝ նկատի ունենալով Նախագծի Հավելվածի (այսուհետ՝ Հավելված) դրույթները և այն հանգամանքը, որ Նախագծով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշման մեջ կատարվում են միայն փոփոխություններ:
4. Նախագծի ուժի մեջ մտնելու վերաբերյալ դրույթն անհրաժեշտ է նախատեսել ոչ թե հավելվածում, այլ որոշման տեքստում: Նույն կետում «հաջորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հաջորդող օրվանից» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները:
5. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ նախագծի Հավելվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել փոփոխվող որոշման հավելվածի տեսքին: Միևնույն ժամանակ, Հավելվածի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «փոփոխություններ կատարելու մասին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կատարվող փոփոխություններ» բառերով:
6. Հավելվածի 1-ին կետի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ

հոդվածի պահանջներին, որոնց համաձայն՝ կետերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ ենթակետերի համարները՝ փակագծերով:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալություն**

| | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| | ՀՀ արդարադատության նախարարություն | 1.Որոշման նախագծում նշվել է իրավական ակտի տեսակը՝ Ն-<br>2.Նախագծի նախաբանում հղում է կատարվել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33-րդ հոդվածին:<br>3 Նախագծի վերնագրից հանվել է և լրացումներ բառերը:<br>4 Նախագծի ուժի մեջ վերաբերյալ դրույթը դրվում է տեքստում:<br>5.Նախագծի հավելվածն համապատասխանեցվել է փոփոխվող որոշման հավելվածի տեքստին<br>6.Հավելվածի 1-ին կետի և ենթակետերի համարակալումը համապատասխանեցվել է <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին: | Առաջարկություննե րն ընդունված են | Առաջարկությամբ ներկայացված փոփոխություններն ու թերությունները վերացված են |

թվականի սեպտեմբերի 25-ին